է հատուցանել։ Նոցա մատաղ միտքը ապագայի հունձքն է։ Մանուկները զարգացնելով, ապագան ենք զարգացնում։ Զարգացնել, ինչ խորախորհուրդ բան։ Թէ որ մանուկն առողջ լինի, ապագան էլ առողջ է լինելու. թէ որ մանուկը առաքինի և պատուաւոր լինի, ապագան էլ փառաւոր է լինելու։ Մանկութիւնը լուսաւորենք դաստիարակութեամբ, որպէս զի ապագայ գարու արշալոյսը ճառագայթարձակ ելնէ։ Մանկութեան ջահն ապագայի արևն է։,,

Օ. Աբ-հէ Տ. Մեսրոպեան գէ-լա-դեանց

յ50 Յոնվարի 1871 թ.

Աէ-ոնդրապոլսոմ։

Դ. ՏԱՐԵԴԱՐՁ

ՕՇՄԱՆ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Ի 23-ն ամսոյս՝ յաւուր Կիւրակէի, արժանաւոր հանդիսիւ տօնեցաւ Դ. Տարեդարձ Օծման Ս. Կաթողիկոսի Տ. Տ. Գէորգեայ Դ. ի Գահակալութիւն Արարատեան Մայր Աթոռոյս և ի Հայրապետութիւն ամենայն Հայոց, որ թէև պատահեալ էր ճշտիւ ի 21-ն Մայիսի։

Օկնի առաւօտեան ժամերգութեան՝ նախ քան զճաշու ժամն՝ ի միջոցի մաղթանաց և ի սեղանատան կարգացուեցան ճառք, զորս արժան կը համարիմք յետագայ թուով հաղորդել ազգայնոցս։

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԵՒ ՕՇՈՒՄՆ

Փառաւոր հանդիսիւ և հոգեպարար հրճուանօք կատարուեցաւ Տօնն Կաթողիկէ Եկեղեցւոյ մերոյ սրբոյ Էջմիածնի յ30-ն ամսոյս։

Ի նոյն աւուր մեծաւ հանդիսիւ օծուեցաւ նորաշէն պահարաններէն հարաւայինը յանուն սրբոյն Գէորգայ՝ ինչպէս նաև նորին սեղանոյն պատկերը։

Ի սեղանատան կարգացեալ ճառը յաջորդ թուով կ'հրատարակեմք։

ՍԱՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ ՄԻ

Ամսոյս 3-ին չորեքշաբթի երեկոյին արտաքոյ կարգի ուրախալի շարժում մի կլտհսնուէր ի թաղըն Հայոց։ Ալք և կանայք, ծերք և տղայք ոտքի վերայ էին, մէկ տունէն միւս տունը կերթային, պատուհանները լի էին շնորհալի կերպիւ հագուած օրիորդներէ և տիկիններէ, որոց Հայկական համեստ գեղեցկութիւնը և զմայլելի քմծիծաղը՝ անցնող դարձող երիտասարդս, էրալիր ուշադրութիւնը կը գրաւէին։ Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն դուռը մյտենիներով զարդարուած էր և անոր առջև, ինչպէս նաև նոյն թաղին մէջ տեղ տեղ լուսավառ ջահեր դրուած էին. իսկ եկեղեցւոյն տաճարը Զատկի և Ծննդեան տօնախմբութեանց աւուրց նման, արծաթեղէն գեղեցիկ անօթներով և կանթեղներով զարդարուած էին, բազմաթիւ մոմեր կը վառէին, եկեղեցւոյն դուռը և ներսը ժողովրդով, և վերնատունը տիկիններով ու օրիորդներով լցուն էին։

Ի՞նչ էր այս տօնախմբութեան և ժողովրդական ուրախալի շարժման պատճառը։

Մոսկուայի մեծահարուստ Հայ վաճառական աղա Յովհաննէս Անանօվի որդի՝ մեծ. աղա Ստեփան Անանօվ ազնիւ երիտասարդին հարսանիքը կը կատարուէր, նոյն գիշերը քաղաքիս Անգլիոյ հիւպատոսարանին առաջին թարգման մեծ. Ղուկաս աղային նորատի չքնաղ դստերը հետ կամուսնանար։

Կէս գիշերը երկու ժամ մնացած, Էքիզեան մեծապատիւ Մկրտիչ աղային ընդարձակ տունէն, ուր կը կատարուէր հարսանիքը, փառաւոր հանդիսիւ և շքեղ կառաց մէջ նստած կան հարսն ու փեսան՝ ընկերութեամբ բազմաթիւ հրաւիրեալց՝ որոնք ևս կառքով էին։ . . . . . Եւ երբ հասան եկեղեցւոյն դուռը, զարդարուն շապիկներ հագած երգչիկ մանկունքը քաղցրաձայն հոգևոր երգերով զիմաւորեցին զանոնք և առաջնորդեցին ի տաճարն։ Ուր ամուսնութեան խորհուրդը փառաւորապէս կատարուելով՝ նորապսակ ամուսինքը միևնոյն շքեղ հանդիսիւ վերադարձան Էքիզեանց Մկրտիչ աղային տունը. և այնտեղ մեծ պարահանդէս մի եղաւ, ու մինչև առաւօտ բոլոր հրաւիրեալները պարեցին, մեծարուեցան, և Շանրանիայի գինի խմեցին ի կենդանութիւն մեծ. աղա Ստեփան Անանօվի և իւր շնորհալի տիկնոջը՝ որոց երկուքն ալ մեծապէս կը փայլէին իրենց բարեկրթութեամբ, ու ազնուական վարմունքով։ Քանզի աղա Ստեփան Անանօվը՝ որ իւր դաստիարակութիւնը Փարիզի